



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### Օ Ր Ե Ն Ք Ը

## ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

### ԳԼՈՒԽ 1

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### **Հոդված 1. Օրենքի նպատակը և կարգավորման առարկան**

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել յուրաքանչյուր անձի և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորություններ՝ առանց խտրականության:

2. Սույն օրենքը սահմանում է խտրականության հասկացությունը և տեսակները, իրավահավասարության ապահովման սուբյեկտները և կառուցակարգերը, ինչպես նաև Իրավահավասարության խորհրդի կարգավիճակը, խնդիրները և գործունեությունը:

#### **Հոդված 2. Իրավահավասարության ապահովման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը**

1. Իրավահավասարության ապահովման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերից, սույն օրենքից, «Կանանց և տղամարդկանց հավասար



իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքից, այլ օրենքներից, ինչպես նաև օրենքով  
նախատեսված դեպքերում՝ այլ իրավական ակտերից:

### **Հոդված 3. Խտրականության արգելքը**

1. Խտրականությունը քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հանրային կյանքի այլ բնագավառներում արգելվում է:

2. Խտրականություն զրսևորած անձինք Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ենթակա են կարգապահական, քաղաքացիաիրավական և (կամ) քրեական պատասխանատվության:

3. Տարբերակված վերաբերմունք, տարբերվող պայմաններ և (կամ) իրավիճակներ կարող են ստեղծվել, եթե դա հետապնդում է իրավաչափ նպատակ, անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում, իսկ գործադրված միջոցները համաչափ են և պատշաճ:

### **Հոդված 4. Խտրականությունը և դրա տեսակները**

1. Խտրականությունը գործողություն է, անգործություն կամ կարգավորում, որն արտահայտվել է անձի իրավունքների և ազատությունների տարբերակմամբ, բացառմամբ, սահմանափակմամբ կամ նախապատվությամբ՝ առանց օբյեկտիվ հիմքերի և հետապնդվող իրավաչափ նպատակի ու ընտրված միջոցների միջև ողջամիտ համաչափության՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական, կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից՝ իրական կամ ենթադրյալ:



2. Խտրականության տեսակներն են՝ ուղղակի խտրականությունը, անուղղակի խտրականությունը, խտրականության հրահրումը, հետապնդումը, սեգրեգացիան, վիկտիմիզացիան և զուգորդված (ասոցացված) խտրականությունը:

3. Ժամանակավոր հատուկ միջոցները և խելամիտ հարմարեցումները խտրականությունն չեն: Խելամիտ հարմարեցումների հետ կապված գործընթացների իրականացման կարգը, ժամկետները և այլ առանձնահատկությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

### **Հոդված 5. Օրենքում գործածվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) **անձ**՝ ֆիզիկական անձ, ինչպես նաև իրավաբանական անձ՝ այնքանով, որքանով սույն օրենքով սահմանված իրավունքները և ազատությունները կիրառելի են իրավաբանական անձի նկատմամբ, անձանց խմբեր, որոնք ունեն ընդհանուր պաշտպանված հատկանիշներ.

2) **պաշտպանված հատկանիշ**՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում նշված մեկ կամ մի քանի, ինչպես նաև անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներ.

3) **ուղղակի խտրականություն**՝ անձի նկատմամբ պաշտպանված հատկանիշներից որևէ մեկի կամ մի քանիսի կամ դրանց հետ ասոցացման հիմքով դրսևորված վերաբերմունք է, որի արդյունքում անձը հայտնվում է համանման հանգամանքներում գտնվող այլ անձի համեմատ նվազ բարենպաստ իրավիճակում: Ուղղակի խտրականությունն առկա է նաև կնոջ նկատմամբ նվազ բարենպաստ վերաբերմունքի դեպքում՝ հղիության կամ մայրության հիմքով.

4) **անուղղակի խտրականություն**՝ առերևույթ չեզոք քաղաքականություն, վերաբերմունք, պայմաններ, չափանիշներ կամ պրակտիկա, որոնց կիրառման արդյունքում անձը, պաշտպանված հատկանիշներից որևէ մեկի կամ մի քանիսի կամ դրանց հետ ասոցացման հիմքով, հայտնվում է համանման հանգամանքներում



գտնվող այլ անձանց համեմատ էապես անբարենպաստ իրավիճակում, կամ որն անհամաչափորեն անբարենպաստ է ազդում անձանց որոշակի խմբի վրա, կամ հավասար վերաբերմունք անձանց նկատմամբ, ովքեր գտնվում են բնույթով տարբեր պայմաններում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման քաղաքականության, վերաբերմունքի, պայմանների, չափանիշների և պրակտիկայի կիրառումը հետապնդում է իրավաչափ նպատակ, անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում, իսկ գործադրված միջոցները համաչափ են.

5) **խտրականության հրահրում**՝ անձին ուղղված հրահանգ է, ցուցում կամ կոչ մեկ այլ անձի խտրականության ենթարկելու համար.

6) **հետապնդում**՝ անձի նկատմամբ անցանկալի վերաբերմունք է պաշտպանված հատկանիշներից որևէ մեկի կամ մի քանիսի կամ դրանց հետ ասոցացման հիմքով, որի արդյունքում նրա շուրջ ստեղծվում է կամ որի նպատակն է նրա շուրջ ստեղծել ոչ բարյացակամ, թշնամական, վիրավորական, նվաստացնող կամ մերժողական միջավայր.

7) **սեգրեգացիա**՝ արտահայտվում է որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ, որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են անձի կամ մի խումբ անձանց որոշակի հատկանիշների հիման վրա այլ անձանցից տարանջատմանը, բաժանմանը, տարբերակմանը՝ առանց իրավաչափ նպատակի, օբյեկտիվ հիմքերի և ողջամիտ համաչափության.

8) **վիկտիմիզացիա**՝ դիտավորյալ գործողություն կամ անգործություն, որը սույն օրենքի շրջանակում իր իրավունքների պաշտպանության նպատակով իրավասու մարմիններին դիմում կամ բողոք ներկայացրած անձի համար հանգեցրել է բացասական հետևանքների.

9) **գուգորդված (ասոցացված) խտրականություն**՝ խտրականություն այն անձի նկատմամբ, ով, թեև օժտված չէ սույն օրենքով նախատեսված պաշտպանված հատկանիշներով, սակայն ազգակցական, ամուսնական կամ այլ կապ ունի նման հատկանիշներ ունեցող անձի կամ անձանց խմբի հետ.



10) **Ժամանակավոր հատուկ միջոցներ**՝ հանրային մարմինների կողմից անձի կամ անձանց խմբի նկատմամբ այնպիսի միջոցների կիրառումը, որոնց նպատակն է այդ անձի կամ անձանց խմբի և հասարակության միջև փաստացի անհավասարության վերացումը և հասարակության մյուս անդամների հետ հավասար հնարավորությունների վերականգնումն ու ապահովումը:

#### **Հոդված 6. Օրենքի մեկնաբանությունը**

1. Սույն օրենքի դրույթները մեկնաբանվում են՝ հաշվի առնելով պետության հատուկ հոգածությունը ընտանիքի՝ որպես հասարակության բնական և հիմնական բջջի նկատմամբ, կրոնական կազմակերպությունների՝ դավանանքի ազատության հետ կապված իրավունքները, Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ ամրագրված՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու առանձնահատուկ դերը:

#### **Հոդված 7. Իրավահավասարության ապահովումը**

1. Իրավահավասարությունն ապահովող սուբյեկտներն են՝

1) պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և դրանց պաշտոնատար անձինք՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված լիազորություններն իրականացնելիս.

2) իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը՝ իրենց գործառույթներն ու իրավունքներն իրականացնելիս.

3) Մարդու իրավունքների պաշտպանը:

2. Իրավահավասարությունն ապահովելու նպատակով պետական, տեղական ինքնակառավարման մարմինները և իրավաբանական անձինք պետք է՝



1) իրենց գործունեությունը, իրավական ակտերը և ներքին կանոնակարգերը համապատասխանեցնեն իրավահավասարության ապահովման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը.

2) իրենց գործունեության մեջ, կրթական, տեղեկատվական և ժամանցային նշանակության նյութերում և այլ հրապարակումներում բացառեն խտրականության և անհանդուրժողականության խրախուսումը.

3) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով արձագանքեն ցանկացած ենթադրյալ խտրականության.

4) խտրականության փաստը հաստատվելու դեպքում խտրականությունն դրսևորած անձանց ենթարկեն պատասխանատվության՝ օրենքով և իրենց ներքին ակտերով նախատեսված կարգով, և ապահովեն խտրականության հետևանքների վերացումը՝ իրենց լիազորությունների կամ գործառույթների շրջանակներում:

#### **Հոդված 8. Խտրականությունից իրավական և դատական պաշտպանությունը**

1. Յուրաքանչյուր ոք, ով հիմքեր ունի կարծելու, որ իր նկատմամբ դրսևորվել է խտրականություն, իրավունք ունի դիմելու դատարան, Մարդու իրավունքների պաշտպանին կամ համապատասխան վարչական մարմին՝ իր իրավունքները վերականգնելու, նյութական և բարոյական վնասի փոխհատուցում ստանալու համար:

2. Արգելվում է որևէ բացասական վերաբերմունք կամ ճնշում այն անձի նկատմամբ, ով խտրականությունից պաշտպանվելու նպատակով դիմել է համապատասխան մարմիններին:

3. Խտրականության վերաբերյալ դիմում քննող մարմինը պետք է ապահովի դիմողի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:



### **Հոդված 9. Ապացուցման բեռի բաշխումը**

1. Դատարանի, Մարդու իրավունքների պաշտպանի կամ այլ պետական մարմնի կողմից խտրականության վերաբերյալ բողոք կամ հայցադիմում քննելիս դիմումատուն կամ հայցվորը ներկայացնում է տվյալներ և փաստաթղթեր, որոնք առերևույթ հիմնավորում են խտրականության առկայությունը, իսկ խտրականության բացակայությունն ապացուցելու պարտականությունը դրվում է պատասխանողի վրա կամ այն անձի վրա, ում դեմ ներկայացվել է բողոքը:

## **ԳԼՈՒԽ 2**

### **ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ**

### **Հոդված 10. Խտրականության արգելքն աշխատանքային հարաբերություններում**

1. Աշխատանքային հարաբերություններում արգելվում է անձի նկատմամբ առանց օբյեկտիվ հիմքերի ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որի արդյունքում խախտվում է աշխատանքային հարաբերություններում իրավահավասարությունը, և անձը զրկվում է մյուսների համեմատ հավասար իրավունքներից և հնարավորություններից:

2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և իրավաբանական անձինք պետք է բացառեն խտրականությունն աշխատանքային հարաբերություններում, այդ թվում հետևյալ ոլորտներում՝

- 1) աշխատանքի վերաբերյալ հայտարարություն և մրցույթ.
- 2) աշխատանքի ընդունում, այլ աշխատանքի տեղափոխում և առաջխաղացում.



- 3) փորձաշրջան և վերապատրաստում.
- 4) աշխատողի աշխատանքային պայմաններ.
- 5) աշխատավարձ, լրացուցիչ վարձատրություն, երաշխիքներ և հատուցում.
- 6) կարգապահական պատասխանատվություն.
- 7) աշխատանքային հարաբերությունների դադարեցում.
- 8) աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում.
- 9) արհեստակցական միություններին անդամակցությունը:

3. Սույն հոդվածի առաջին մասում նշված գործողությունները խտրականություն չեն, եթե դրանք բխում են աշխատանքին ներհատուկ պահանջներից: Աշխատանքին ներհատուկ պահանջները պաշտպանված հատկանիշներից որևէ մեկի կամ մի քանիսի հիմքով տարբերակում է, բացառում, սահմանափակում կամ արտոնություն, որը բխում է տվյալ աշխատանքի բնույթից և առանձնահատկությունից, հանդիսանում է տվյալ աշխատանքին ներհատուկ որոշիչ և էական պահանջ՝ եթե նման պահանջը հետապնդում է իրավաչափ նպատակ և համաչափ է:

### **Հոդված 11. Գործատուի պարտականությունները իրավահավասարության ապահովման բնագավառում**

1. Իրավահավասարության ապահովման բնագավառում գործատուն պարտավոր է՝

- 1) աշխատանքային հարաբերություններում կիրառել, պաշտպանել և խրախուսել իրավահավասարությունը, ապահովել հավասար հնարավորություններ և ցանկացած տեսակի խտրականության արգելք.





2) ձեռնարկել միջոցներ աշխատանքային հարաբերություններում խտրականությունը կանխարգելելու և իրենց աշխատանքային գործունեության ընթացքում խտրականություն դրսևորած անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

**Հոդված 12. Հանրությանը հասանելի ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման ընթացքում խտրականության արգելքը**

1. Հանրությանը հասանելի ապրանքներ մատակարարելիս և ծառայություններ մատուցելիս խտրականությունն արգելվում է:

2. Սույն գլխով սահմանված խտրականության արգելքը տարածվում է այնպիսի իրավահարաբերությունների վրա, որոնք ձևավորվում են հետևյալ ոլորտներում ապրանքներ և ծառայություններ առաջարկելիս՝

- 1) հանրային ծառայություններ.
- 2) բնակչության բժշկական օգնություն և սպասարկում.
- 3) սոցիալական ապահովություն և աջակցություն.
- 4) բանկային ծառայություններ, ապահովագրության, դրամաշնորհների, վարկերի, ապառիկի և ֆինանսավորման ծառայություններ.
- 5) տրանսպորտային ծառայություններ.
- 6) մշակույթ, ժամանցային ծառայություններ և սպորտ.
- 7) անշարժ գույքի առքուվաճառք և վարձակալում.
- 8) առևտրային և մասնագիտական գործունեություն.
- 9) կրթություն և գիտություն:



### **Հոդված 13. Խտրականության արգելքը տնտեսական գործունեությանը գրադվելիս**

1. Արգելվում է խտրականությունը տնտեսական գործունեության բնագավառում, այդ թվում հետևյալ հարցերում՝

- 1) իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցում.
- 2) հարկային և վարկային քաղաքականություն.
- 3) ստուգումներ և վերահսկողություն.
- 4) գործունեության կասեցում, դադարեցում և լուծարում:

### **ԳԼՈՒԽ 3**

#### **ԻՐԱՎԱՀԱՎԱՍՍԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

### **Հոդված 14. Իրավահավասարության խորհրդի կարգավիճակը և կազմը**

1. Իրավահավասարության խորհուրդը Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր խորհրդակցական մարմին է, որի նպատակն է աջակցել Մարդու իրավունքների պաշտպանին անձանց իրավահավասարության և խտրականության բոլոր դրսևորումներից պաշտպանության ապահովման հարցում: Իրավահավասարության խորհուրդը գործում է իրավահավասարության, անաչառության, հրապարակայնության, թափանցիկության, մատչելիության և ներկայացուցչականության սկզբունքների հիման վրա:

2. Իրավահավասարության խորհուրդը ստեղծվում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և սույն օրենքով սահմանված կարգով և գործում է այդ օրենքների, Իրավահավասարության խորհրդի աշխատակարգի և այլ իրավական ակտերի հիման վրա:



3. Իրավահավասարության խորհուրդը կազմված է առնվազն 7 անդամներից, որոնք Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նշանակվում են 3 տարի ժամկետով՝ մեկ անգամ վերանշանակման իրավունքով, և գործում են հասարակական հիմունքներով: Մարդու իրավունքների պաշտպանը խորհրդի անդամներին ընտրում է իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձանցից և գիտնականներից:

4. Իրավահավասարության խորհրդի աշխատակարգը հաստատում է Մարդու իրավունքների պաշտպանը:

5. Իրավահավասարության խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է ամսական առնվազն մեկ անգամ հրավիրվող նիստերի միջոցով:

6. Իրավահավասարության խորհրդի գործունեության կազմակերպչական և տեխնիկական կողմերն ապահովում է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քարտուղարությունը:

#### **Հոդված 15. Իրավահավասարության խորհրդի անդամների ընտրությունը**

1. Իրավահավասարության խորհրդի կազմում ընդգրկվելու համար Մարդու իրավունքների պաշտպանին դիմում ներկայացնելու կարգը դիմում ներկայացնելու վերջնաժամկետից առնվազն 30 օր առաջ հրապարակվում է Մարդու իրավունքների պաշտպանի կայքում:

2. Իրավահավասարության խորհրդի կազմում ընդգրկվելու համար դիմումները ներկայացվում են ինչպես հասարակական կազմակերպությունների կողմից, այնպես էլ՝ ինքնառաջադրման միջոցով:

3. Իրավահավասարության խորհրդի անդամ նշանակվելու դիմում կարող է ներկայացնել այն անձը, ով՝

- 1) Հայաստանի Հանրապետության քաղաքացի է.
- 2) իրավապաշտպան գործունեության ոլորտում ունի առնվազն երեք տարվա գործունեության փորձ կամ մարդու իրավունքների պաշտպանության բնագավառին առնչվող գիտական աշխատություններ.



- 3) որևէ կուսակցության անդամ չէ:
4. Դիմողների կենսագրությունները հրապարակվում են Մարդու իրավունքների պաշտպանի կայքում:
5. Իրավահավասարության խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում թափուր տեղի համար դիմում ներկայացվում է սույն հոդվածով սահմանված կարգով, եթե խորհրդի անդամների քանակը քիչ է սույն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նվազագույն քանակից:

**Հոդված 16. Իրավահավասարության խորհրդի անդամների լիազորությունների դադարումը**

1. Իրավահավասարության խորհրդի անդամի լիազորությունները Մարդու իրավունքների պաշտպանը կարող է վաղաժամկետ դադարեցնել՝
  - 1) խորհրդի անդամի դիմումի հիման վրա.
  - 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարման կամ.
  - 3) խորհրդի անդամի մահվան, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անհայտ բացակայող ճանաչվելու կամ մահացած հայտարարվելու կամ.
  - 4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դիտավորությամբ կատարած հանցագործության համար դատապարտվելու կամ.
  - 5) օրենքի, ինչպես նաև Իրավահավասարության խորհրդի աշխատակարգի պահանջները խախտելու դեպքերում:

**Հոդված 17. Իրավահավասարության խորհրդի խնդիրները և գործառույթները**

1. Իրավահավասարության խորհրդի խնդիրներն են Հայաստանի Հանրապետությունում իրավահավասարության և հավասար հնարավորությունների ապահովման, խտրականության կանխարգելման և վերացման բնագավառներում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանն աջակցելը:
2. Իրավահավասարության խորհուրդը՝



1) Մարդու իրավունքների պաշտպանին աջակցում է Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բնագավառներին առնչվող բողոքների քննության հարցում և դրանցում առկա խախտումների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացնում է խորհրդատվական եզրակացություն:

2) անհրաժեշտության դեպքում բողոքների առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացնում է առաջարկություններ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով նրան վերապահված կոնկրետ լիազորությունների իրականացման անհրաժեշտության վերաբերյալ: Խորհուրդը կարող է նաև Մարդու իրավունքների պաշտպանին առաջարկություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության սահմանադրական և վճռաբեկ դատարաններին խտրականության վերաբերյալ գործերով օժանդակ դիրքորոշում (*amicus curiae*) ներկայացնելու վերաբերյալ:

3) Մարդու իրավունքների պաշտպանին աջակցում է նաև՝

ա. պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև կազմակերպություններին խորհրդատվություն տրամադրելու:

բ. խտրականության բոլոր դրսևորումների կանխարգելմանն ուղղված՝ հասարակական իրազեկության բարձրացման:

գ. խտրականության վերաբերյալ հետազոտություններ և ուսումնասիրություններ իրականացնելու, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդման՝ իրավահավասարության ապահովման և խտրականության վերացման ոլորտների մշակմանն առնչվող հարցերում:

#### ԳԼՈՒԽ 4

#### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ



**Հոդված 18. Եզրափակիչ և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Մարդու իրավունքների պաշտպանը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում ձևավորում է Իրավահավասարության խորհուրդը և հրավիրում դրա առաջին նիստը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով. «Խտրականության վերաբերյալ հայցադիմում քննելիս հայցվորի կողմից ներկայացվում են տվյալներ և փաստարկներ, որոնք առերևույթ հիմնավորում են խտրականության առկայությունը: Խտրականության բացակայությունն ապացուցելու պարտականությունը դրվում է պատասխանողի վրա:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ կետով.

«5) խտրականության վերաբերյալ բողոք պարունակող և խտրականությունն առերևույթ հիմնավորող տվյալներ և փաստարկներ պարունակող ցանկացած հայցով պատասխանողը՝ խտրականության բացակայությունն ապացուցելու մասով:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 162.1-րդ հոդվածի 2-րդ մասը



լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ կետով. «10) խտրականության չենթարկվելու իրավունքը:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետում «9» թիվը փոխարինել «10» թվով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

### ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»,  
«ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ

#### *1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը*

Հայաստանի Հանրապետությունում ընթացող սահմանադրական և դատաիրավական բարեփոխումների գործընթացի շրջանակներում առավել կարևորություն են ստանում մարդու իրավունքների նորովի արժևորումը, դրանց իրացումն ու իրական պաշտպանությունն ապահովող կառուցակարգերի ներդրումը:

Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով կարևորվել է նաև ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների իրականացման ապահովմանն ուղղված օրենքի ընդունումը: Մասնավորապես, սահմանադրության 56-րդ հոդվածը սահմանում է.





«1. Յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք:

2. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:

3. Սույն հոդվածով սահմանված իրավունքների իրականացումը կարգավորվում է օրենքով»:

Այս համատեքստում հատկանշական է, որ անկախության հռչակումից ի վեր Հայաստանի Հանրապետությունը չի ունեցել օրենք ազգային փոքրամասնություններին պաշտպանության մասին, այլ տարբեր օրենքներում և այլ իրավական ակտերում տեղ են գտել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ու ազատությունների իրականացման վերաբերյալ առանձին դրույթներ, ինչի պատճառով համապատասխան կարգավորումները կրում են ոլորտային և հատվածական բնույթ:

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների օրենսդրական ապահովման պահանջներ ամրագրված են բազմաթիվ միջազգային համաձայնագրերով, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը: Մասնավորապես, ՄԱԿ-ի 1966 թվականի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին Միջազգային Դաշնագրի 27-րդ հոդվածի համաձայն. «Այն երկրներում, որտեղ գոյություն ունեն էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններ, այդ փոքրամասնություններին պատկանող անձանց չի կարող մերժվել այդ նույն խմբի այլ անդամների հետ համատեղ իրենց մշակույթից օգտվելու, իրենց կրոնը դավանելու և դրա ծեսերը կատարելու, ինչպես նաև մայրենի լեզվից օգտվելու իրավունքը»: Հայաստանի Հանրապետությունը միացել է նաև Ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին 1995թ. Եվրոպայի Խորհրդի Շրջանակային կոնվենցիային, որում կարգավորվում և պարզաբանվում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մշակույթը, էթնիկ, լեզվական և կրոնական առանձնահատկությունները պահպանելու և զարգացնելու իրավունքները և պետությունների պարտավորությունը նպաստելու այդ իրավունքների



իրականացմանը: ԵԽ շրջանակային կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1998 թվականի նոյեմբերի 1-ից:

Մինչ ԵԽ շրջանակային կոնվենցիան ստորագրելը, Հայաստանի Հանրապետությունը 1994 թվականի հոկտեմբերի 21-ին Մոսկվայում ստորագրել էր «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին» ԱՊՀ կոնվենցիան, որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1997 թվականի հունվարի 10-ից:

Առաջարկվող նախագծի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունը հաստատում է իր պատրաստակամությունը և հաստատուն կամքը ապահովել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ միջազգային փաստաթղթերով ամրագրված իրավունքների իրականացումը Հայաստանում: Հայաստանի Հանրապետությունը ելնում է այն միջազգային իրավական սկզբունքից, համաձայն որի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը համարվում է մարդու իրավունքների պաշտպանության անկապտելի մասը:

Միևնույն ժամանակ, փոփոխված սահմանադրությունն ընդգծում է խտրականության համընդհանուր արգելքի կարևորությունը: Այդ նպատակին են ուղղված 28-30-րդ հոդվածները, որոնք սահմանում են բոլորի հավասարությունն օրենքի առջև, խտրականության համընդհանուր արգելքը և կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը: Բացի այդ, սահմանադրության 86-րդ հոդվածում, որը թվում է տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակները, առանձնացված է կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը: Այդպիսով ՀՀ Սահմանադրությունը նոր խնդիրներ է դրել՝ միջազգային չափանիշներին համապատասխան կանոնակարգել և պաշտպանել իրավահավասարությունը և հավասար հնարավորությունները:

Պետք է հաշվի առնել, որ խտրականության բացառումը չի կարող սահմանափակվել իրավական ակտերում խտրականության գույթ հռչակագրային



արգելքով: Այս ոլորտում նույնպես անհրաժեշտ են առավել համապարփակ կարգավորումներ, որոնք հնարավորություն կտան երաշխավորել բոլորի իրավահավասարությունը, դրա խախտման դեպքում կանխատեսելի և արդյունավետ ընթացակարգերի միջոցով իրավունքները վերականգնելու, փոխհատուցում ստանալու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ: Հիշյալ նպատակներին է ուղղված է իրավահավասարության ապահովմանը ուղղված միասնական օրենսդրություն մշակելը, ինչը բխում է նաև ՀՀ միջազգային պարտավորություններից: Մասնավորապես, խտրականության արգելքի և իրավահավասարության ապահովման գործնական և արդյունավետ կառուցակարգեր նախատեսելը բխում էն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայից, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրից, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայից և հատկապես՝ դրա 12-րդ արձանագրության 1-ին հոդվածից, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայից, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայից և մի շարք այլ միջազգային փաստաթղթերից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանը մարդու իրավունքների միջազգային աստյանների կողմից ուղղված հանձնարարականներից, այդ թվում՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի՝ 2017թ. մայիսի 12-ին հրապարակված ՀՀ 6-րդ և 7-րդ պարբերական զեկույցների վերաբերյալ դիտարկումներից, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի՝ ՀՀ 2-րդ և 3-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներից, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի՝ ՀՀ 5-րդ և 6-րդ պարբերական զեկույցների վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներից, ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի՝ Հայաստանի սկզբնական զեկույցի վերաբերյալ 2017 թվականի



ապրիլի 7-ին կայացած 325-րդ հանդիպման դիտարկումներից և մի շարք այլ փաստաթղթերից:

Նշված խնդրի լուծման ուղղությամբ պետական քաղաքականության առաջին քայլերից կարելի է համարել ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 303-Ն որոշման ընդունումը: Այդ որոշմամբ հաստատվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը, որի 8-րդ կետի շրջանակներում սահմանվել է ՀՀ օրենսդրության՝ խտրականության արգելմանը վերաբերող միջազգային իրավական նորմերին համապատասխանության ուսումնասիրման անհրաժեշտությունը, ինչպես նաև «խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենք ընդունելու նպատակահարմարության քննարկումը: Իսկ 2017 թվականի մայիսի 4-ին հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 77-րդ կետով արդեն նախատեսված է իրավահավասարության ապահովման համար օրենսդրական կառուցակարգերի ստեղծումը:

«Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը կապահովի նաև պետության կողմից ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց նկատմամբ խտրականության բացառման ինչպես նեգատիվ, այնպես էլ պոզիտիվ պարտականությունների իրականացումը, ինչով էլ պայմանավորված՝ «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը հղում է կատարում «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծին: Քննարկվող օրենքների նախագծերն օրգանական կապի մեջ են միմյանց հետ և այդ պատճառով էլ նպատակահարմար է դրանք ներկայացնել մեկ փաթեթով:

Ամփոփելով՝ կարելի է փաստել, որ «Ազգային փոքրամասնությունների մասին» և «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է սահմանադրական փոփոխություններով, խտրականության համընդհանուր արգելքի գործնական ապահովման և ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց



իրավունքների արդյունավետ իրականացման համար կազմակերպաիրավական հիմքերի նախատեսման պահանջով, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով:

## ***2. Առաջարկվող կարգավորման բնույթը***

«Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի նպատակն առավել համակարգված ձևով սահմանել Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց սահմանումը, նրանց իրավունքները և պաշտպանության անհրաժեշտ մեխանիզմներ, սահմանել հանրապետական գործադիր մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրները այդ ոլորտում: Նախագծով նախատեսվում է նաև ստեղծել ազգային փոքրամասնությունների հարցերով խորհուրդ, որը կձառայի որպես հարթակ ազգային փոքրամասնությունների հարցերը քննարկելու և լուծումներ առաջարկելու համար: Նման կարգավորումը օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքեր կստեղծի ՀՀ Սահմանադրության 56-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ամրագրված՝ Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների համակարգված իրագործումն ապահովելու համար:

Ներկայացված օրենքի նախագծով՝ միջազգային իրավական փաստաթղթերի համաձայն, ամրագրվել են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հետևյալ իրավունքները .

1) ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական ինքնությունը պահպանելու, զարգացնելու և արտահայտելու իրավունքը և դրա համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը,

2) իրենց լեզուն սովորելու, անձնական հարաբերություններում և հասարակական վայրերում իրենց լեզվից անարգել օգտվելու իրավունքը,



3) ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց միավորումներ ստեղծելու իրավունքը,

4) ազգային փոքրամասնություն համարվելու կամ չհամարվելու իրավունքի ազատ իրացումը, իրենց կրոնը բացահայտ դավանելու իրավունքը,

5) ազգային փոքրամասնության լեզվով դաստիարակություն և կրթություն ստանալու իրավունքի իրացումը և այլ իրավունքներ:

«Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծով սահմանվում են խտրականության հասկացությունը և տեսակները, կանոնակարգվում են խտրականության վերացմանն ուղղված և խտրականությունից պաշտպանվելու իրավական մեխանիզմները, ինչպես նաև Իրավահավասարության խորհրդի կարգավիճակը, խնդիրները և գործունեությունը:

Նախագծերի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր անձի և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորություններ՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Ամրագրելով խտրականության համընդհանուր արգելքը՝ «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը սահմանում է խտրականության հասկացությունը և տեսակները, ինչպիսիք են՝ ուղղակի խտրականությունը, անուղղակի խտրականությունը, խտրականության հրահրումը, հետապնդումը և սեգրեգացիան: Անկյունաքարային նշանակություն ունի Նախագծով խտրականության վերաբերյալ բողոքների քննության համար ապացուցման բեռի բաշխումը: Մասնավորապես, ինչպես Նախագծում, այնպես էլ վերաբերելի դատավարական օրենսգրքերում լրացում կատարելու մասին հարակից



նախագծերում սահմանվում է, որ թեև բողոք բերած անձը ներկայացնում է տվյալներ և փաստարկներ, որոնք առերևույթ հիմնավորում են խտրականության առկայությունը, խտրականության բացակայությունն ապացուցելու պարտականությունը, այնուամենայնիվ, կրում է պատասխանողը:

«Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծում հասարակական կյանքի առանձին ոլորտներում խտրականության դեպքերի վերացմանը նվիրված է ինքնուրույն գլուխ, որն անդրադառնում է անձի իրավունքների տեսանկյունից այնպիսի հիմնաքարային ոլորտների, ինչպիսիք են՝ հավասարության ապահովումն աշխատանքի և հանրությանը մատչելի ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման, տնտեսական գործունեության ոլորտներում:

Ինչ վերաբերում է Իրավահավասարության խորհրդին, ապա ըստ նախագծի՝ այն Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին առընթեր խորհրդակցական մարմին է, որի նպատակն է ապահովել անձանց հավասարությունը և պաշտպանությունը խտրականության բոլոր տեսակի դրսևորումներից:

Նախագծով կարգավորված են Իրավահավասարության խորհրդի անդամներին ներկայացվող պահանջները, անդամների ընտրությունը, նշանակումը և լիազորությունների դադարումը: Իրենց հատուկ ամրագրումն են ստացել խորհրդի գործառույթները:

### ***3. Ակնկալվող արդյունքը***

«Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է հստակեցնել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց շրջանակը, սահմանել ազգային փոքրամասնությունների հիմնական իրավունքները և ազատությունները, ինչպես նաև պետական և տեղական



ինքնակառավարման մարմինների պարտականությունները դրանց իրականացման ապահովման գործում,

կազմավորել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց խնդիրները և իրավունքների իրացման հետ կապված հարցերը քննարկելու համար խորհրդակցական մարմին:

«Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է երաշխավորել Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր անձի իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորությունները, կատարելագործել խտրականության դեմ պայքարի բնագավառի օրենսդրությունը, ապահովել խտրականության կանխարգելման, դրանից իրավական և դատական պաշտպանության իրավական հիմքերը:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»,**

**«ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ»**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ**

**ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

**ԴԵՊՔՈՒՄ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ**

**ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Ազգային փոքրամասնությունների մասին», «Իրավահավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և հարակից օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության





այլ իրավական ակտերի ընդունման, փոփոխման կամ լրացման անհրաժեշտություն չի առաջանում:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

«ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»,

«ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ

ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ

ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ազգային փոքրամասնությունների մասին», «Իրավահավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և հարակից օրենքների նախագծերի ընդունման դեպքում պետական բյուջեի ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի առաջանում: